ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 26 հուլիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Վ. Հովհաննիսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Վաչագան Ազիզյանի դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Վաչագան Ազիզյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390, 392, 407, 414.1, 414.2 հոդվածները եւ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասի սանկցիան ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

1. Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներում առկա չէ որոշակիություն, որն էլ դատարաններին ընձեռում է հնարավորություն՝ զրկելու անձին ազատությունից առանց հիմնավորման, որի արդյունքում ստեղծվում է հակահիրավական իրավակիրառ պրակտիկա:

Դիմողը գտնում է նաեւ, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ չընդունելը եւ բողոքը վերադարձնելը չի նշանակում արդարադատության իրականացում: Ըստ ՀՀ ՔԴՕ-ի 407-րդ հոդվածի 2.1-րդ մասի՝ բողոքի պատճենը գործը քննած դատարան եւ դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերի բացակայությունը բավարար հիմք է առանց ժամկետ տրամադրելու՝ բողոքը վերադարձնելու համար, առանց հաշվի առնելու, որ վերաքննիչ դատարանում մեկ անգամ արդեն վճռաբեկության կարգով գործը քննվել է, եւ հիմա անհրաժեշտ է ըստ էության լուծել հարցը, եւ ոչ թե վերադարձնել բողոքը:

Ըստ դիմողի՝ ՀՀ ՔԴՕ-ի 390-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանի կողմից գործերը վճռաբեկության կարգով քննելը նույնպես չի համապատասխանում իրավական պետության, դատարանների կողմից արդարադատություն իրականացնելու եւ վերադաս դատարան բողոքարկելու սահմանադրական սկզբունքներին ու նորմերին:

Այսինքն՝ վերոնշյալ հոդվածներով ՀՀ վճռաբեկ եւ վերաքննիչ դատարաններին տրվել է կամայական գործելակերպի լայն հնարավորություն, ինչպես նաեւ արդարադատություն իրականացնելուց հրաժարվելու իրավունք:

Մինչդեռ ՀՀ Սահմանադրությունը եւ ՀՀ դատական օրենսգիրքը հենց դատարանին են պարտադրում արդարադատություն իրականացնել:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ վերոհիշյալ դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

ա/ նախ՝ վիճարկվող 407-րդ, 414.1-րդ, 414.2-րդ հոդվածների վերաբերյալ առկա են սահմանադրական դատարանի կողմից կայացված ՍԴՈ-674, ՍԴՈ-691, ՍԴՈ-709 եւ ՍԴՈ-818 որոշումները, ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի եւ ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դիմումն այդ մասով ենթակա է մերժման,

բ/ վիճարկելով վերոհիշյալ նորմերի սահմանադրականությունը՝ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ դրանց հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի

4-րդ մասը, որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Բացի դրանից, դիմողը նաեւ չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

գ/ դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևեւաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել վերոհիշյալ նորմերի հակասահմանադրականության վիճարկմամբ: Այսինքն՝ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին»

ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Վաչագան Ազիզյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հուլիսի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/1-24